1624

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0134-21

Ձեռնարկողը՝ ***«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ***
Ք. Երևան, Աբովյան 29

Գործունեությունը՝ ***Վարդենիկ համայնքի «Կրթահամալիրի» վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0134-21

<<22>> 07 2021թ.

Վարդենիկ համայնքի «Կրթահամալիր»-ի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ համայնք

«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է՝ վերակառուցել Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի 4-րդ փողոց, թիվ 67 հասցեում գտնվող Վարդենիկի Ս. Մխոյանի անվան կրթահամալիրը, նախագիծը մշակվել է համաձայն պատվիրատուի և Վարդենիկի համայնքապետարանի կողմից ներկայացված 2020թ. սեպտեմբերի 25-ի N13 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ դպրոցի կառուցման և վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 1.2հա ընդհանուր մակերեսով հողամասում: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակն է՝ սեյսմիկ անվտանգության բարելավման շրջանակներում ապահովել դպրոցի անվտանգությունը, սեյսմանվտանգությունը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում գործող կրթահամալիրի տարածքում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННОЕ НЕКОММЕРЧЕСКОЕ ОБЩЕСТВЕННОЕ ОБЪЕДИНЕНИЕ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ "ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"
STATE NON-COMMERCIAL PUBLIC ASSOCIATION ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Վարդենիկ համայնքը գտնվում է Սևանա լճի հարավային հատվածքում, ծովի մակարդակից 1920-2050մ բարձրության վրա:

Համաձայն հայտի տեղանքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը, համաձայն իրականացված ուսումնասիրությունների և գոյություն ունեցող գրական տվյալների, վերևից-ներքև ներկայացված է ավազակավային խճով և մանրախճով, անդեզիտաբազալտներով:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող կրթահամալիր շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

Բնութագրվող տարածքը գտնվում է «Ցուրտ» կլիմայական շրջանում: Տարածաշրջանին բնորոշ են զով և քամոտ ամառները, օդի միջին հուլիսյան ջերմաստիճանը կազմում է +16C, հարաբերական խոնավությունը՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վրկ:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ:

Բնութագրվող տարածքում՝ կրթահամալիրի շենքից մոտ 8-9մ հեռավորության վրա, գտնվում է «Մատուռ» սրբավայր՝ բաղկացած 3 խաչքարերից:

Բնութագրվող տարածքում և տեղամասի անմիջապես մերձակայքում չկան մակերևութային ջրային մարմիններ կամ առուներ: Տեղամասից մոտ 600մ հեռավորության վրա է հոսում Վարդենիկ գետը:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.2հա,
- մասնաշենքերի թիվը՝ 7,
- մասնաշենքերի կառուցապատման մակերեսը՝ 5009.3քմ,
- բացօդյա խոտածածկ հրապարակ՝ 1444քմ,
- ասֆալտապատ մակերես՝ 4916.7քմ,
- կանաչապատման մակերես՝ 630քմ:

Համաձայն հայտի կրթահամալիրը նախագծվում է 450 աշակերտի համար: Գոյություն ունեցող շենքը բաղկացած է 7 երկհարկանի մասնաշենքերից, որոնք պահպանվելու և վերակառուցվելու են: Մասնաշենքերի վերահատակագծման լուծումներում հաշվի են առնվել ուսումնական սենյակները, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը, կրթահամալիրի գրադարանը, ճաշարանը և բացօթյա մարզահրապարակը:

Տարածքում գոյություն ունեցող կաթսայատունը պահպանվելու և իրականացվելու է տեխնոլոգիական լուծումների արդիականցում:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է կատարել ասֆալտապատման և կանաչապատման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել ֆուտբոլի դաշտի և մանկապարտեզին հատկացված տարածքների ցանկապատում՝ հրապարակների ծածկույթը նախատեսվում է խոտածածկ: Կրթահամալիրի 6-րդ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մասնաշենքը նախատեսվում է, որպես մանկապարտեզ՝ առանձին մուտքով և ցանկապատով:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժ խմբերի համար նախատեսվում են վերելակ և թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ:

Կրթահամալիրի մասնաշենքերի տանիքը նախագծվում է լանջավոր՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Տանիքում նախատեսվում է տեղադրել ֆոտովոլտային կայան: Տեղադրվելու են 315 Վտ հզորության 160 մոնոբյուրեղներով ՖՎ մոդուլներ տանիքի հարավային հատվածքում՝ 470 թեքության տակ, որը կապահովի դպրոցին շուրջ 50վտ հզորություն էլեկտրաէներգիա:

Նախագծվող կրթահամալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները՝ ըստ տեխնիկական պայմանի, կազմակերպվելու են նոր խմելու ջրագծի կառուցմամբ՝ 700 մ-ից և 140 մ հեռավորության վրա գտնվող Կ. Շահինյան փողոցի համայնքային կոյողագծին միացմամբ: Կոյուղու ցանցը կառուցվելու է d=160-200մ տրամաչափի պոլիէթիլենային խողովակներով:

Վերակառուցվող կրթահամալիրի ջեռուցման գործընթացը, ինչպես և նախկինում կկազմակերպվի գոյություն ունեցող կաթսայատան միջոցով և նախատեսվում է իրականացնել միայն տեխնոլոգիական լուծումների արդիականացում: Նախատեսվում են 421 կվտ/ժամ հզորության ջրային երկու կաթսաներ՝ բնական գազով շահագործվող:

Կրթահամալիրի վերակառուցման շինմոնտաժային աշխատանքները, համաձայն կրթահամալիր շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի, նախատեսվում է իրականացնել փուլային: Վերակառուցման աշխատանքների 1-ին փուլում կիրականացվեն 5, 7 և 6 մասնաշենքերի վերակառուցման գործողությունները, իսկ 2-րդ փուլում՝ 1, 2, 3 և 4 մասնաշենքերի վերակառուցումը:

Շինարարության յուրաքանչյուր փուլի նորմատիվ ժամկետն հաշվարկվել է 13 ամիս ներառյալ՝ հրապարակի նախապատրաստման գործողությունները, իսկ վերակառուցման աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի 26 ամիս:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է 1194.20մ^3 ծավալի հողային հանույթ: Հանվող 525.80մ^3 ծավալով հողային զանգվածը կօգտագործվի որպես հետլիցք, մնացած 668.4մ^3՝ կտեղափոխվի Վարդենիկի համայնքային աղբավայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ 5546.7մ^2 մակերեսով տարածքների ջրցանման համար՝ 2196.5մ^3: Աշխատանքների շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը վերցվելու է գործող կրթահամալիրի մասնաշենքից՝ տեղադրելով կարգավորող փական և ջրաչափ միացման կետում: Ջրապահանջը կկազմի 1034.2 մ^3 շինարարություն ժամանակ կամ 1.808մ^3 օրական:

Շինարարության փուլում առաջանալու են մոտ 2426 տ շինարարական աղբ և ≤5 կգ/օր կենցաղային աղբ, ինչը կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤25 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, ավտոբետոնապոմպ, էքսկավատոր, ավտոինքնաթափ, ավտոբետոնախառնիչ, ամբարձիչ, եռակցման ագրեգատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարության համար անհրաժեշտ բետոնը և շաղախը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացած տրանսպորտային միջոցներով: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ, ներքին հարդարման, ջերմամեկուսիչ նյութեր և այլն:

Դպրոցի կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է 630մ^2 մակերեսով կանաչ գոտու ստեղծում, որտեղ կտնկվեն 50 արժեքավոր ծառատեսակներ, որոնց տեսակային կազմը կհամաձայնեցվի կրթահամալիրի տնօրինության և համայնքի հետ: Կրթահամալիրի տարածքում՝ գլխավոր մուտքի և փողոցին զուգահեռ հատվածում, առկա են 20 կանադական բարդիներ: Նշված աշխատանքներն իրականացվելու են տարածքի բուսահողով զբաղեցրած հատվածներում, ինչի համար լրացուցիչ բուսահող չի պահանջվում: Ոռոգման ցանց չի նախագծվում, քանի որ տեղանքում բացակայում է ոռուգման համայնքային ջրագիծը: Կանաչ գոտիների ոռոգումը կիրականացվի ջրցան մեքենաների միջոցով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- շինարարական մեքենաների երթևեկության կազմակերպում՝ համապատասխան չափաքանակներով ծածկված բեռնատարներով և շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների լվացված անվադողերով,
- շինհրապարակում նյութերի և թափոնների պահումը բետոնե տարածքում՝ ծածկված վիճակում,
- շինհրապարակի ցանկապատում, ցուցանակների ու պաստառների տեղադրում,
- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն՝ գործիքային չափագրումների կատարմամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին, մինչև ժամը 18:00,
- անսարք վիճակում մեքենաների և սարքավորումների օգտագործման բացառում,

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՐՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՐՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ»
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կանոնավոր մոնիթորինգի իրականացում,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- շինարարության ընթացքում աղբի ու շինարարական թափոնների տարանջատում, դասակարգում ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր,

- հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն,

- բանվորական և այլ անձնակազմի ապահովում՝ սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց, ականջակալ և անվտանգության գոտի),

- դպրոցի կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ,

- աշխատանքների և արտակարգ իրավիճակների անվտանգության ապահովում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է 15 599.11 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության շինարարությունը և շահագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող գործունեության վերաբերյալ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է, հաշվի առնելով նաև ստացված դիտողությունները և առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
RA YEREVAN ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

3. Վերանորոգվող շենք-շինությունները ծածկել համապատասխան բարձրության անջրթափանց թաղանթով:

4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները, ներառյալ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:

6. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վարդենիկ համայնքի «Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Ա. Վարդանյան